



ՏԵՐԵՆ

Հ. ԿԱԿԱԳՆԱՆ

ԻՍԼԱՄԱԳԻՏԱԿ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԹԻԻ

ԵՐԵՎԱՆԻ ՀՏՊԻՏԱՆԵՐԸ

ՔՐԲԶԱՆԻՐ ԶԱԽԵՅ 20 ԷԶՈՎ

ԱՆՁԻՆՔ

Յ. ԱԼՓԻԱՐ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

Ե Ի

Լ Ի Լ Ա

Մոսկ

60 փարայ

Տ. ՇԻՐԻՆ



ՀԱՅԿԱՊԱՆԻՍ

ՀԱՅԿԱՊԱՆԻՍ

ՀԱՅԿԱՊԱՆԻՍ

ՀԱՅԿԱՊԱՆԻՍ

ՀԱՅԿԱՊԱՆԻՍ
ՀԱՅԿԱՊԱՆԻՍ
ՀԱՅԿԱՊԱՆԻՍ
ՀԱՅԿԱՊԱՆԻՍ

ՀԱՅԿԱՊԱՆԻՍ

ՀԱՅԿԱՊԱՆԻՍ



ԼԻԼԱ



ԿԱՎԱՅՈՇ

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ԻՐ ԿԵԱՆՔԸ

ԻՐ ՑԱՒԱԳԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԻՐ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ գրականութիւնը աներես մէկը կը փնտռէր, թատրոնը՝ իր ունեցած առօրիշներու թիւին աներես մըն ալ կը փափաքէր աւելցնել, լրագրութիւնը աներեսի մը պակասովը կը տոչորէր, մարդկութիւնը աներեսի մը երկունքովը կը տառապէր ...:

Եւ ահա՛ յամի Տեառն 1884ին, տարուան չեմ գիտեր ո՛ր ամիսը, բայց ապահովաբար խիստ անգնահատելի մէկ ամիսը, երբ հացին օխան յիսուն փարայի էր ելած և գարիին գիները չորս փարա ինկած էին, ծնաւ ... մուկն չնչին կամ Երուանդ Թօլայեան, այս կատարելապէս աներես անձը, որ դժբաղդաբար... երկու երես ունի:

Բերայի էյրի փողոցն է որ պատիւ ունի ծնունդ տուած ըլլալ այդ մարդուն, որ այսօր հայ գրականութեան անունը կ'արատաւորէ իր գրելով, ահա՛ թէ ինչո՞ւ, ինք և իր անձնական բոլոր գործերը ... ծուռ դացած են մինչեւ այսօր:

Եթէ եր. Թօլայեան Շիտակ փողոցը ծընած ըլլար, թերեւս ա՛յսչափ էյրի մարդ մը չէր ըլլար հիմա, — ինչպէս կը հաւատեն:

Տակաւին լոյս աչխարհ չեկած, նոյն իսկ սաղմնային վիճակի մէջ, ուր մանկիկները սովորութիւն չունին մտածելու և խօսելու, այդ աւանակը (Ե. Թօլայեանին կ'աղնարկեմ, ուրկէ ներում կը խնդրեմ բացատրութեանս

կատակածեւ կոչտութեանը համար) դրացիին կնիկները և բոլոր հայ գրագէտները կը բանբասէր ինքնիրենը:

Մանկաբարձուհին այդ չծնած տղուն առնակնկալ չատարածութիւններէն սարսափահար, կը պոռար:

— Քա՛ մարիկ, աս տղան ներսը ի՞նչ կ'ըլլայ կոր:

Մուկ-աշխարհէն լոյս-աշխարհ գալուն, մեր ապագայ երգիծաբանին առաջին շարժումը եղաւ իր մանկաբարձուհին փաթթուիլ և անոր երեսները համբուրել՝ մարքի տը Սատի մը խենչէութեամբ:

Բարեբաղդաբար մանկաբարձուհին դեռնափ կին մը չէր, ապա թէ ոչ անվայել տեսարանի մը ակնհաստես պիտի ըլլայինք... թերեւս:

— Օ՛, մա՛ շեղ, ի՞նչ աղւող ճիւղներ ունիս... կը մըմնջէր նորածին մանկիկը:

Ներկաները զարմանահար մնացին:

— Քա՛, աս լէշի հրեան ղըրկէ եկաւ, փափրսային ամէնքը՝ նորածինին այս մարտիլական արտասանութեանը առջեւ:

Ու երբ հաղար դժուարութեամբ նորածինը անկողնին վրայ զետեղեցին, վախատուն մը փրթաւ սենեակին մէջ:

— Քա՛, հրէշ մըն է եղեր:

Ու ամէն մարդ պփգանքով ու հրէշ մը տեսնելու վատառողջ հետաքրքրութեամբ տակաւ մօտեցաւ անոր, որ իրօք զարհուրելի հրէշ մըն էր:

Երեւակայեցէ՛ք օրօրոցի մը մէջ արիւնսթաթափ փոքրիկ կարմիր զանգուած մը, տծեւ ու այլակերպ, ահռելիօրէն հակաբնական մարմինով, հակառակ կողմը դարձած բազուկներ՝ զիստերուն կցուած, գլուխը փոքրին տակ՝ աչքերուն ներքեւ քիչ մը մագով, կիկլոսեան բերան մը ճակատին վրայ և կօկորդիլոսներու բերին նման վերէն վար բացուող, պզտիկ քիթ մը ուսերուն վրայ և սրունքի նմանող զոյգ մը անհաւասար կտորներ: Ու այս անձուկնի այլանդակ զանգուածը կը պոռար, կը ճչար: Ապահովաբար ապագայ զուարթ հեղինակին պարզած այս տեսարանը... զուարթ չէր ամենեւին:

Ծնողքը և ազգականները յուսահատած էին:

— Հրէշ մը, ի՞նչ պիտի ընենք հիմա այս հրէշը...:

Մէկը առաջարկեց երթալ անմիջապէս թաղել:

Ուրիշ մը յանձնարարեց՝ չիչի մը մէջ պահել ալքովով:

Երրորդ մը ըսաւ թէ՝ պէտք է քառասուն փարայի ցուցադրել այս հրէշը՝ Ղալաթիոյ թատրոններէն մէկուն մէջ:

— Բաւական դրամ կը շահուի, նկատեց այդ դրական մարդը:

Բայց ազգականները կը բողոքէին:

— Այս աղան չի կրնար այսպէս ապրել, պէտք է բժիշկ մը կանչել:

Տօք. Զարդարեանը եկաւ, որ տակաւին այն ատենները ո՛չ անհասկան կառք ունէր և ո՛չ ալ Պոլսոյ բոլոր հիւանդանոցներուն վիրաբուժապետն էր, արդէն մէկը միւսին հետեւանք ըլլալով:

— Մեղք փարաներուն, կը մըթմըթաբ պառաւ մանկաբարձուհին, այս տօքորը Աստուած է քի այս տղուն վիճակը փոխէ: Աստուած ինչ որ ստեղծեր է ճե՛ մարդ ա՛յնպէս կը մնայ:

Կ'երեւի թէ «Աստուած ինչ որ ստեղծեր է ճե՛ մարդ այնպէս չի մնար», վկայ՝ Վահան Փափագեանը, զոր Աստուած կարճատես չստեղծեց, բայց այսօր կարճատես է:

Առանց ուրիշ օգնութեան և առանց ուրիշ օգնական բժիշկի աջակցութեան, ապագայ մեծ վիրաբոյժը ապագայ մեծ երգիծաբանին օրօրոցին մօտեցաւ. վայրկեան մը՝ անչարժ՝ հրէշին նայեցաւ, և յետոյ, յանկարծ, զայն թեւերուն մէջ վեր առնելով՝ գլուխը բարձին վրայ դարձուց և ոտքերը իրենց սովորական տեղը դրաւ:

Ամէն մարդ մօտեցաւ՝ ապշահար. փոքրիկ հրէշին տեղը արական սեռէ մանկիկ մը, կատարելապէս բարեկազմ, պառկած էր հոն և խօսելէ, պոռալէ, ճգալէ յոգնած՝ կը քննանար հիմա... սատառաներու ժպնելով:

Մինչ այս հրաշքը հիացումով բերանաբաց ձգած էր ներկաները, մեծ վիրաբոյժը Տօք. Զարդարեան ուսերը վեր առաւ և սենեակէն դուրս ելած միջոցին գոհացաւ լոկ ըսել մանկաբարձուհին:

— Քա՛, չօնուխը պիտի մեռնես եղեր...:

ճիշտ տեսնուած ժամն է որ նորածին մը իր օրօրոցին մէջ գլուխը քերս պառկցուի:

Եր. Թօլայեանը իր օրօրոցին մէջ քերս պառկեցուցեր են եղեր:

Ահա՛ թէ ի՞նչ կը նշանակէ Բերա Էյրի փողոցը ծնիլը. — մարդուս բոլոր անձնական գործերը ծո՛ւռ կ'երթան:

* * *

Ո՛չ միայն դործերը, այլ անունն ալ յաճախ . . . :

Որովհետեւ Երուանդ Թօլայեան իր բուն անունով Երուանդ Թօլայեան կ'անուանուի ա՛յնչափ որչափ տանձը՝ խնձոր կամ սերկեւիլը՝ դուռնի:

Գիտէ՞ք ո՛վ է Պ. Փրանկիսկոս Ճէնտէրէճեան:

Զի, Երուանդ Թօլայեան իր բուն անունովը կ'անուանուէր Փրանկիսկոս Ճէնտէրէճեան:

Կը սպասէի՞ք:

Փրանկիսկոս էր աւագանի անունը անո՛ր, որուն միմոսային ու ցաւագարտանջ կեանքը նկարել ձեռնարկեցինք հոս համապատրէ՛ն քարեկենդանի չաբաթով իր դիմակը վար առնելու համար մեր կարգին:

Փրանկիսկոս՝ վեր, Փրանկիսկոս՝ վար:

Փրանկիսկոս կ'անուանէին զինքը թաղին հանած-վարածները, որոնց սրտակից բարեկամն էր և կուկուլի ընկերը:

Փրանկիսկոս կը կոչէին զինքը դրացիի ջլդիկ աղջիկները, որոնց չոգոյա և ժապաւէն կը կրէր անձանձիւ՝ պղտիկ համբոյրի մը փոխարէն, զորս ուրիշներու կը փոխանցէր շատ անգամ չէի մը պէս:

Բայց այս անունը ա՛յնչափ ջղերուն կը դպչէր իրեն, որչափ . . . իսկեմպէ չօրպասին օրին մէկը կամ Խանձեանին ոտանաւորները:

Թէեւ այդ անունով շատ մը ուրբեր կան, որոնց օրինակելի կենցաղը և մաքրակրօն քարքը օրհնութեան պսակ մը կը հիւսէ մարդկութեան գլխուն (վա՛յ գլխուն) և թէեւ Փրանկիսկոս ո՛չ միայն սպասաւորի ու դռնապանի անուն է, այլ նա՛եւ շատ մը կոմսերու և մարքիզներու, բայց «Փրանկիսկոս» անունը՝ մեր գիշերաձղձիկ գաւեշտագիրին ականջին՝ «կակոս»ի, «կոզոս»ի կամ «քոքոզ»ի ներդաշնակութիւն մը կը ստանար և

որովհետեւ ի տղայ տիոց տեսակ մը բնագրական հակումով չէր ուզէր ամենեւին «կակոս», «կոզոս», ո՛չ ալ «քոքոզ» ըլլալ, առաւ իրիկուն ուրիշ անուն մը կը փնտռէր իրեն:

— Ես օրին մէկը նշանաւոր անձ մը պիտի ըլլամ, բայց Փրանկիսկոս անունը չի յարմարիր այս նպատակին, «Փրանկիսկոս Ճէնտէրէճեան» նշանաւոր ըլլալու հակում ունեցող անուն մը չէ, փոխէ՛նք . . . Նախ անունը գտնենք և յետոյ նշանաւոր ըլլանք:

Ուրիշներ ճի՛շդ ասոր հակառակը ըրած են, նախ իրենք նշանաւոր են եղած, որով իրենց ալ անունն ալ նշանաւոր դարձած է. բայց ըսինք որ մեր հերոսը չա՛տ . . . ապուռ-ճուպուռ մարդ մըն էր:

Անանուն մարդ մըն էր առ այժմ, ինքզինքին անուն մը փնտռելու զբաղած և բոլոր անուն հանած մարդերու անունները աչքէ կ'անցընէր՝ ինքզինքին անուն մը ընտրելու համար անոնց մէջէն:

Կարապետ Փանոսեան, Համբարձում Ալաճաճեան, Մարկոս Նաթանեան, Յարութիւն Մրմրեան . . . :

Այս անուններէն ո՛չ մէկը գործին կուգար:

— Զաւա՛կս, կ'ըսէին իրեն խելացի մարդեր, աշխարհիս վրայ ամօթ է իր անունին չհաւնիլ, մարդ ի՛նչ անունով որ է, անո՛յ կը մնայ . . . :

— Եթէ իմ անունս ես ինքս որոշած ըլլայի, իրաւունք ունիք, բայց այն տոտեն ես . . . ձայն չունիմ եղեր տակաւին: Հիմա որ ձայն ունիմ և ուզածիս չափ կրնամ պոռալ, պէտք է անունս փոխեմ:

Ճիշդ այն տոտեն էր որ հանդիպեցաւ Երուանդ Տէր-Անդրէասեանի անունին . . . :

«Երուանդ . . .» խորհեցաւ, «է՛հ, գէշ անուն չէ»:

Ու այդ օրէն սկսաւ կռուիլ այն ամէն մարդու հետ, որոնք զինքը կը յամառէին «Փրանկիսկոս» կոչել, փոխանակ «Երուանդ»ի:

— Մենք քեզի Փրանկիսկոս կը ձանձնանք և մեզի համար «Փրանկիսկոս» ես . . . կ'ըսէին անոնք:

Եթէ փարա ունենաք, ծանուցումներ պիտի հանէր՝ իր անունի փոփոխութիւնը յայտարարելու:

աարարող, բայց որովհետեւ փարա չունէր, քոհացաւ լոկ բարեւ չտալով բոլոր անոնց՝ որոնք զինքը «Երուանդ» չէին անուաներ:

Ու բոլոր ատ բաները կը պատահէին, երբ տակաւին աբգը կարդալ չէր գիտեր և էրիկ-մարդու բանդալոնի տեղ՝ աղջկան շրջազգեստ կը հագնէր տակաւին, չպարտաւորուելու համար օրը քսան անգամ բանդալոնը քակել-կապել՝ երթալու համար հոն, ուր ձանձրաշալի կերպով յաճախակի երթալու յոռի սովորութիւնը ունէր անառակը, ա՛յնչափ շատ առամոքսը կը թիմէր որ:

* * *

Առաջին կրթութեան յարկը որ նախնական գիտելիքները ուսոյց իրեն, եղաւ աղջիկներու վարժարան մը, որուն անունը չենք յիշեր, արատ մը չբերելու համար այդ հաստատութեան անարատ համբաւին:

Հայերէնէ, ֆրանսերէնէ, թուաբանութեանէ և բոլոր գիտութիւններէ առաջ այս վարժարանին մէջ իր սովորածը եղաւ թէ ... ի՞նչպէս կը դարպասեն աղջկան մը:

Արդէն ա՛յնչափ խիստ փարեցաւ այդ գիտութեան՝ որ ժամանակ չմնաց միւս գիտութիւններուն հետեւելու և վարժարանին տընտքէնութիւնը ամիսը անգամ մը կանոնաւորաբար կ'որոշէր վճարել այս անպիտան տըղան որ բան մը չէր սովորեր աղջիկներու փէշէ չէր դատուեր և կը սպառնար դպրոցին անպատուութիւնը ըլլալ:

Այսպէս շարունակեց չորս տարի, որով Երուանդ Թօլայեան ճիշդ 96 անգամ դպրոցէն վճարուեցաւ և դարձեալ ընդունուեցաւ:

Չենք կարծեր այս տողերով վերաւորած ըլլալ արժանապատուութիւնը Մանգումիի շաքաթօրեայ քրոնիկագրին, քանի որ դպրոցէն վճարուած ըլլալը պատուաբեր մէկ բարենիշն է ամէն շնորհքով մարդու:

Չեռուընիդ խիղճներնուդ վրայ դրած՝ պատասխանեցէ՛ք. — Ո՞ր շնորհքով անձն է որ քանի մը անգամներ չէ վճարուած դպրոցէն:

Կ'ըսեն որ Ռ. Պէրպէրեան անգամ ժամանակին անգամ մը դպրոցէն ճամբուած է, բայց ասիկա արգելք մը չէ եղած նորէն Ռ. Պէրպէրեան մը ըլլալուն. — ընդհակառակը:

Երուանդ Թօլայեան աղջիկներու վարժարանին մէջ իր դասընկերուհիներուն կը սովորեցնէր Կեանքը, — Կ գլխագիր:

Այն ատեն այդ դպրոցին մէջ աշակերտուհիներու միջեւ մեծ խնդիր էր եղած թէ՛ մանկիկները ուրկէ առաջ կուգան, Բեաղըտ խանէէն կը բերուին թէ զենպիւրով երկինքէն կ'իջնեն:

Երուանդ Թօլայեան՝ այն ատեն ալ՝ այս տեսակ խնդիրներու մասին իր ունեցած մասնաւոր ձեռնհասութեամբ կը բացատրէր մարդկան ծագումը և վախճանը, և աշակերտուհիները բերանաբաց կը մնային:

Արձակոյթի ժամերուն, փոխանակ տղայական ժամանցներով պարապելու, ժամոնակը կ'անցընէր՝ հասակակիցներու հետ նըշանուելով:

— Երուանդ, կ'ըսէին իրեն պեպիի պէտք աղւոր աղջիկներ, երբոր մեծնաս, որուն հետ պիտի կարգուիս:

— Քեզի հետ, կը խոստանար՝ ամէն մէկուն զա՛տ զա՛տ:

Բոլոր աղջիկներուն խաղալիքն էր ան... ի տղայ տիոց:

«Տողան չօնուգ ...» կ'ըսէ թրքերէն առածը:

— Մեզի քիչ մը կլիքնիրմիւր ըրէ՛, կ'աղերսէին փոքր աղջիկներ մինեաքիւր միմոսին:

— Ի՞նչ պիտի տաք, կը հարցնէր անամօթ անառակը, որ չէր գիտեր ոչինչ տալ ձրի, նոյն իսկ իր մեղքերը:

— Ի՞նչ որ կ'ուզես, պիտեմիւր, չոգուա, քանամէլա ...

— Պաշիկ մը ... կը հայցէր մեր ապագայ պօս մարդը:

Օրին մէկը կիներ ու երգչուհիներ ալ միեւնոյն խնդրանքը պիտի ընէին ...

Երուանդ Թօլայեան իր ապագան կը չինէր:

Ու ճիշդ իր ապագան չինած միջոցին էր որ վարժարանին տնօրէնուհին վրայ հասաւ, և այս անգամ պաշտօնապէս վեց-գիրը դրինք մեր ապագայ մեծանուն երգիծաբանին:

97 անգամ վճարուելն էր այս:

Վերջինը եղաւ ... այս վարժարանէն:

* * *

Ուրիշ վարժարան մը դրին զա՛յն, որ եր-
դում ըրած էր կարծէք մարդ չըլլալու:

Այս վարժարանին ալ անունը չենք յիշեր,
ո՛չ թէ ռեգլամ չընելու համար, — ո՛հ, ո՛չ —
այլ ... միշտ վարժարանին պատիւին պահ-
պանութիւն համար:

Արդէն սարսափելի շատախօս, իր շատա-
խօսական տաղանդը կրկնապատկեցաւ հոս,
չնորհիւ իր շատախօս վարժապետներուն:

Լատիններէն ու Հելլեններէն սովորեցաւ հոս,
առաջինը՝ լատինական գրականութեան վրան-
քաց գլուխ գործոցները կարդալու և երկ-
րորդը՝ հոռոմ սպասուհիներու հետ դարպա-
սելու նպատակով:

Չկա՛ր դաս մը, չկա՛ր գիտութիւն մը,
չկա՛ր լեզու մը, ուր երուանդ Թօլայեան
վերջինը չըլար:

Վերջին ի լեզուագիտութիւն, վերջին ի
քիմիագիտութիւն, վերջին ի բնագիտութիւն,
վերջին յաշարհագրութիւն, վերջին նոյն
իսկ ի չորս գործողութիւն, առաջին էր
միշտ ... յանրարոյութիւն:

Մրցանակաբաշխութեան օրերը ընկերնե-
քուն ետին կը պահուըտէր՝ իր ամօթը ծած-
կելու համար. չէ եղած նոյն իսկ օր մը ուր
յաջողած ըլլայ մրցանակաբաշխութեան մի-
ջոցին ոսկեղօծ գիրք մը ստանալ. — ահա՛
թէ ինչո՛ւ այս օր կը քաշկռտէ մրցանակա-
բաշխութիւնները, առաջին ելող աշակերտ-
ները և անոնց ծնողքները, որոնց դէմ խիստ
բնական քէն մը ունի:

Եթէ ինք ալ՝ նոյն իսկ անգամ մը առա-
ջին հանդիսացած ըլլար, հաւատացէ՛ք որ
երբէք չպիտի քաշքշէր «առաջինները»:

Միմիայն մէկ բանի մէջ յաջողակութիւն
ցոյց կուտար փոքրիկ Թօլայեան. — ոտանա-
ւոր գրելու մէջ, և կը հաւատտեն որ Մե-
ծարեւոյն աւելի անհասկնալի ոտանաւորներ
կը գրէր այն ատեն:

Եւ դասընկերներ անոր այս յատկութե-
ան և բարեացակամութենէն օգուտ կը քա-
ղէին, սիրատուութիւն քերթուածներ գրել տալու
համար իրենց Տիւլսիններուն:

Չէր զգուշացիր Թօլայեան և անհուն հա-
ճոյքով գրաբար անհասկնալի նամակներ կը
գրէր իր՝ ընկերներուն համար, որոնք բան

մը չէին հասկնար թէ եւ, բայց բերաններուն
շուրը կը վազէր:

Տամներեք տարու կար հաղիւ մեր ապա-
գայ երգիծաբանը, երբ գնաց պաշտօնապէս
... կին դողդոջ էակը ճանչնալու:

Մինչեւ այն ատեն իբր կին ճանչցած էր
լոկ իր մայրը, մեծ մայրը, մորաքոյրը, Թա-
ղին ու դպրոցին աղջիկները:

Բայց այդ օրը — այդ վսեմ օրը ... Ի-
րեն համար — ճանչցաւ բո՛ւն կինը — Ո՛չ Ե.
Արմէնինը — և շատ գէշ տպաւորութիւն մը
պահեց անկէ ի վեր կնոջ մասին:

Արդէն ճշմարիտ է որ ուր է բանի մը
մասին լաւ տպաւորութիւն պահելու համար,
բնա՛ւ ճանչնալու չէ՛ դայն:

Եր. Թօլայեան կինը ճանչցաւ և երբ հար-
ցնէք այսօր իրեն թէ ի՛նչ կ'արժէ կին մը,
պիտի պատասխանէ անկասկած.

— Բանի մը դրուշ կամ քանի մը ոսկի
կնկա՛նը կ'օրէ:

Բողոքականներու ժողովարանը տարբե-
անգամ մը դայն. — հիացաւ Բրօք. Ճէճիզ-
եանի պերճախօսութեան:

Եւ անկէ վերջ սկսաւ ամէն շաբթու եր-
թալ. — նոյն իսկ պահ մը խորհեցաւ՝ Բրօք.
Ճէճիզեանի սիրոյն, բողոքական պատուելի
ըլլալ:

Երբ վարժարանէն իմացան այս եղելու-
թիւնը՝ ... վառեցին:

Թօլայեան երդուընցաւ — իր պատիւին
վրայ — Աստուծոյ մարդը չըլլալ և այսպէսով
նորէն վարժարան ընդունուեցաւ:

Անկէ վերջը ալ առտու իրիկուն ժողո-
վարանէն անպակաս էր:

Այս յամառութեան առջեւ ա՛լ ձայն չհա-
նեցին իր ուսուցիչները:

Երբ տեսաւ, որ ա՛լ ձայն չեն հաներ,
Թօլայեան ա՛լ սկսաւ քաշուիլ իր ենդադրա-
կան նպատակէն ու սկսաւ եկեղեցի յաճախել:

Օրին մէկը երբ տեսաւ որ այս վարժա-
րանին մէջ օղ մարդ ըլլալիք չունի.

— Վարժարան փոխենք նայինք, խորհե-
ցաւ, թերեւս մարդ կ'ըլլանք:

Ու Սէն-Պրնուան գնաց:

Բայց հաղիւ երկու օր յաճախած էր հոն,
երբ տեսաւ թէ՛ աշխարհականէ աւելի կրօ-
նաւորի վարժարան մըն է ան, քանի որ

առտուընէ մինչեւ իրիկուն անդադար կ'աշօթեն, և ձգեց փախաւ:

Ու դարձեալ մարդ չեղաւ:

Երբ գրուած է որ մէկը մարդ չըլլայ, աշխարհիս բոլոր վարժարանները և համալսարանները անօգուտ են:

* * *

Որոշած էր ջութակահար ըլլալ՝ Գիւլպէ-լիւք մը կամ Բականինի մը թերեւս, եթէ ոչ Մարկեան Ահարոն մը:

Չորս տարիէ ի վեր դաս կ'առնէր և տակաւին չէր յաջողած քիթը բերանը բօլքա մը դարնել:

Տօ նաքիւրեկները միշտ so սիեզ կ'ըլլային իր մատներուն տակ և սի պիսօլները՝ սի նաքիւրեկ անպատճառ:

Չորս տարի ձգնեցաւ մեծ ջութակահար մը ըլլալու և չյաջողեցաւ ե'ս-քա'մ-քա'մ մը իսկ ըլլալ:

Երբ փորձէր դաշնակի հետ կտոր մը զարնել, ինք դաշնակէն տասը վայրկեան առաջ կը վերջացնէր իր մասը:

— Զաւակս, ըսաւ օրին մէկը իր վարպետը, որ ուրիշ մէկը չէր բայց եթէ Ղալաթիոյ ժամուն Բ. դպրապետը Յ. Սինանեան, Ահարոն Մարկեանի դասատուն, որ այն ատեն այս մեծ ջութակահարին ... արմոնիքի դաս կուտար, զաւակս, դուն ամէն ինչ կրնաս ըլլալ՝ բացի ջութակահարէ:

— Հակառակը չեմ պնդեր, պատասխանեց Երուանդ Թօլայեան, որ այս խօսքին կը սպասէր իր ջութակը՝ քավան-արաքին կախելու համար:

Դաշնակի ազօնսկոնի մը քով մտաւ, որովհետեւ անպատճառ կ'ուզէր իր ձեռքը «պիլեգիկ» մը ունենալ, ինչպէս կ'ըսեն:

Անգամ մը վարպետը զինքը տուն մը զրկեց դաշնակը ազօնս ընելու, մեր տաղանդաւոր երգիծաբանը 12 ժամ արիւն քոր-ինքներու մէջ աշխատեցաւ և երբ դաշնակը յանձնեց իր տիրոջ ազօնս եղած վիճակի մը մէջ, 75 ոսկինոց կալօփն գինը 12 ոսկի իջած էր յանկարծ:

Մեքենավարութեան ձեռնարկեց և քիչ մնաց օր մը իր տպարանին մեքենան պիտի ջախջախէր՝ մեքենավարութիւն սովորելու պատրուակով:

— Ես արհեստի մարդ չեմ, այլ արուեստի մարդ եմ, խորհեցաւ ինքնիրեն Ի. Բ. դարու իմաստուն ցաւագարը:

Եւ Բերայի կնոջական մեծ դերձակատուններէն մէկը մտաւ՝ կարուհիներուն վերակացութիւն ընելու համար:

Յիսունի մօտ դեռատի կարուհիներ կային և գեղանի յաճախորդութիւն կուգային՝ քսեցածի:

Ո՛հ, երանելի՛ օրերը, ուր ա'յնչափ կնոջական մերկ թեւեր տեսաւ, քրտինքներու բուրբալներ ըմբոշանեց, ա'յնչափ ձիւնեղէն ծոծրակներ վայելեց և ա'յնքան սեզօլքներ նշմարեց՝ դռներու կէս-բացուածքէն:

Ասիկա գէշ գործ չէր թէւեւ, բայց իր խելքին զըվանան, ո'չ արդէն այնքան կանոնաւոր, սկսաւ բոլորովին խախտիլ, տանակ որ ո'չ մէկ ժամագործ կամ մեքենագործ պիտի կարենար չակել, բացի թերեւս... Տօք. Մոնճէրիէ:

Ու ասոր վրայ դերձակատունն ալ ձգեց՝ պանքա մը մտնելու համար, ուր սկսաւ առտուընէ մինչեւ իրիկուն՝ փոխան չորս ոսկի՛ ուրիշներու փարաները համրել:

Բայց, ինչպէս կ'ուզէք որ կարենար սիրել այս գործը տա' տղան, որ կ'ատէր նոյն իսկ իր ... չունեցած փարաները համրել:

* * *

Հողագործ մը առօրեայ առաւօտեան Ծաղիկին — գրական, դիտական եւ ին — հրատարակութեան կը ձեռնարկէր:

— Խմբագրի պետք կայ, կուգա՞ս, հարցուց Սագայեան:

Խորհեցաւ թէ ո'չ հայերէն գիտէր, ո'չ ալ հայերէն ուղղագրութիւն:

— Շատ աղէկ, կուգամ, պատասխանեց Միմոսը՝ հայերէն լեզուն և ուղղագրութիւնը սովորելու համար գէթ այս առիթով:

Ծաղիկ ծայրէ ծայր տառասխալներով կը տպագրուէր, սա՛ բնական պատճառով որ Թօլայեան էր փորձերուն նայողը:

Խմբագրապետը կը գնահատէր Թօլայեանը, որպէս զի ան ալ զինքը գնահատէր, և Թօլայեան կը գնահատէր իր խմբագրապետը, որովհետեւ ան ալ զինքը կը գնահատէր:

Եթէ այս փոխադարձ գնահատութիւնները

չըլային այդ թերթին մէջ, խմբագրապետը շատոնց կը դադրէր խմբագրապետ ըլլալէ և Թօլայեան՝ խմբագիրը:

Պատրիարքարանի լուրերու տեղեկաբեր, Թօլայեան՝ կը մրցէր Այվազեանի և Մուսահեանի հետ իր այն լուրերովը զորս միմիայն իր խելապատակէն կը հանէր՝ Պատրիարքարանին ղիւաններէն հանելու տեղ:

«Ստախոսութիւնը լրագրողին մեծագոյն դրամագլուխն է», պատուիրած էր իրեն օր մը Այվազեան (Արրահամ, Արրահամ):

Ահա՛ թէ ինչո՛ւ Թօլայեան ա՛յնչափ ստախոս է. — մեղքը՝ Այվազեանին ճիտին:

Օր մըն ալ Մադիկ՝ չկրնալով դիմանալ իւր բացերուն, հարկադրուեցաւ դադրեցնել իր հրատարակութիւնը, մայթին վրայ թափելով խմբագրապետը, խմբագիրները, գրաւարները, ցրուիչները և նոյն իսկ մեքենան դարձնող համալը:

Ու Թօլայեան մնաց զուրկ ու եւ է թերթէ, ուր կարենար տպել իր սրտառուչ ու արտասուալից դամբանականները՝ Ադամեանի, Այվազովսքիի ու Բուշքիի վրայ:

Անգիտակ իր երգիծական «հուժկու» ստղանդին՝ քնարերգակ ողբերգու մը կ'երեւակայէր ինքզինքը Միմոս, որ իր տասնը վեց գարուններու մէջ էր տակաւին, (ո՛հ, ծաղիկ հասակը):

* * *

Մնակեան, գուցէ 160րդ անգամ լքուած իր շուրջիններէն, որոնք նորէն բաժնուած էին իրմէ՝ նոր խումբ մը կազմելու համար, միշտ ձախողօրէն՝ աւա՛ղ, (աս քանիերորդ անգամը, Աստուած իմ), հրապարակային հրաւեր մը կ'ուզէր դերասանացուներուն:

— Դերասան ըլլալ ուզողը թո՛ղ ինծի գա՛յ ...:

— Tiens! մոմուաց Թօլայեան՝ որ զեկ գեկ մոլութիւնը ունի իր խօսակցութեան ֆըրանսերէն բառեր խառնելու՝ իր ֆրանսերէն գիտնալը ցոյց տալու համար աշխարհին, եթէ երթամ դերասան ըլլալու, ու յիսուննոց մը տալով շոգենաւին (այն ատեն տակաւին առաջին կարգը չէր նստեր) զնաց Դատը-գիւղ, Cabotin-Ville, ուր Մնակեան և իր խումբը թեւաբաց ընդունելութիւն մը չըրին իրեն:

(Այս մասին կարդալ Դերասանի մը Գօթերը, գրուած նոյն իսկ իր կողմէ Լոյսի մէջ ժամանակին):

Բայց օրին մէկը ձանձրացած՝ ու եւ է դեր չխաղալէ, Թօլայեան դարձեալ կը մտնէ խմբագրութեան ասպարէզը Սուրհանդակի միջոցաւ, ուր Ներքին լուրերու բաժինը կը խմբագրէր անոնի կերպով յօրանջելով մինչեւ իրիկուն և երկու սիլիկ քառորդի փոխարէն յօդուած կը գրէր ձիվէլէկին:

Բայց Սուրհանդակի մէջ է որ Թօլայեան կը զգայ իր Պարոնեանին ուղղակի յաջորդը ըլլալը թեթեւամիտ յօդուածով մը, զոր գըրած է իր ծանօթուհիներէն մէկուն ջիղերուն դաշելու բարի դիտումով:

Մելիքն էր այս յօդուածին վերնագիրը, որ գաղտնի մնացած տաղանդ մը երեւան հանեց յանկարծ (հը՛մ, հը՛մ):

Եթէ Օր. Մելիքն չըլլար, Երուանդ Թօլայեան՝ այս օրուան երգիծաբան-կատակերգակը չպիտի ըլլար ապահովարար. — հարցուցէ՛ք գրավաճառ Արչակ Պապիկեանին:

Թօլայեան կ'երազէր իր կեանքը վերջացնել խմբագրական սեղանի առջեւ, բայց ըսուած է որ անգամ մը դերասան եղողը չի կրնար թատերաբեմէն բաժնուիլ՝ եթէ երբէք վիճակահանութեան Ա. պարգեւը չչափի:

Օրին մէկը, խղճի մտօք, Բթըռ փողոցը պատահած հրդեհի մը պատմութիւնը կը հիւսէր, երբ ներս մտաւ Վահան Շահինեանը, Վահան Փափաղեան սօզին:

— Բարեւ, Թօլա՛:

— Ի՞նչ լուր, հարցուց անկաւ սիրտը հօ՛փ մը ընելով:

— Դերասան կ'ըլլա՞ս նորէն:

— Այո՛ ... ո՛չ ...

Չափրաստի թատերախումբն էր, որուն ամբողջ տեւողութեանը միջոցին — երկու տարի — Երուանդ Թօլայեան ա՛յնչափ փարա վաստկեցաւ, որ ... ա՛լ Աստուած գիտէ:

Անկուտիութիւնը վարակուող ախտ մըն է. և Եր. Թօլայեան քիչ ժամանակի մէջ Չափրաստին ախտէն վարակուեցաւ, բայց բարեբաղդաբար չուտ թօթափեց:

Չափրաստի խումբը սնանկացաւ ... ինչպէս գրուած էր վերը, — երկինքը:

* * *

Այն ատեն, Թօլայեան (Երուանդ) փափազեան (Վահան)ին հետ ընկեր եղաւ՝ այս վերջինին զաւեշտութիւն ձգած ահագին շահը կիսելու համար:

Բայց զաւեշտութիւնը ա՛յնչափ շատ շահը ձգէր, մանաւանդ Թօլայեանին ընկերակցութենէն ի վեր, որ Վ. փափազեան շատ չանցած ... վեց-գիրը դրաւ Թօլայեանին:

Այն ատեն, Նշան-Պապիկեաններու Ծաղիկը երգիծական զաւեշտութիւն զարձուց ճիշդ 5 շաբթուան համար, թէեւ 5րդ թիւը հրապարակ չէ ելած՝ տպագրիչին ղրամին տրուած չլլալուն պատճառաւ:

Նշան-Պապիկեան գրատունը արդէն սնանկացած իր գրական կիսամսեալն, չկրցաւ այս անգամ դիմանալ զաւեշտութիւնն և ուխտեց մէյ մըն ալ երբէք թերթ չհրատարակել:

Ու եր. Թօլայեան նորէն միայց մէջտեղ:

Բարեբաղդաբար նոյն միջոցին դարձեալ անհամաձայնութիւն մը կար Մնակեան խումբին մէջ և այս անգամ Թօլայեան միացաւ Մնակեանին Իլմիր և Սամսոն երթալու համար: Մինչ իր շաբթական հրաշակերտներուն հրատարակուիլը կը տեսնէինք Մանգուլմէի վերջին էջին մէջ:

Իլմիրէ վերադարձին, Իլմիրցիներու վերայ բանբասանք մը գրեց ...

Սամսոնէ վերադարձին, Սամսոնցիներու վերայ բանբասանք մը գրեց ...

Անանկ որ իր վարպետը Մնակեան երգունցաւ այս անպիտանը մէյ մըն ալ հետը չառնել ...

Բայց նորէն առաւ, որովհետեւ գրուած է թէ շնորհով մարդոց քով հատ մըն ալ անպիտան պէտք է գտնուի և միթէ ինչպէս շնորհովները արժանիքնին պիտի գնահատել տային, եթէ չլլային անպիտանները:

Ահա՛ օգտակարութիւնը անպիտաններուն:

* * *

Մէյ մըն ալ ահա՛ խելքին փչեց «նուրբ» բիւսներ խաղալը:

Նուրբ, նրբութիւն, բարակ, բարակութիւն, փափուկ, փափկային:

Երկու տարի շարունակ ասիկա երազեց և վերջապէս Ահմէտ Ֆէհիմի հետ ձեռնարկեց թատերախումբի մը, որուն նպատակն էր նուրբ, նրբութիւն, բարակ, բարակութիւն, փափուկ, փափկային:

Ի դուր Մնակեան խրատեց իրեն:

— Զաւա՛կս, բարակը չանցնի՛ր, հաստին նայի՛նք ...

— Չէ՛, պատասխանեց Թօլայեան, պէտք է անօթի մնալ նուրբ բիւսներ խաղալ ժողովուրդին: Արուեստը՝ արուեստին համար:

— Ատ ըսածդ չես կրնար ընել:

— Այսօրու ընէ իսկ կը սկսիմ կոր պանիր հաց ուտել, վարպե՛տ, վրայ տուաւ Թօլայեան՝ որ հաստատ նպատակը ունէր բարակ բիւսներու ընթերցումը ըմբոշխնել տալ հասարակութեան:

Օր մը պանիր-հաց կերաւ, երկու օր պանիր-հաց կերաւ, երեք օր, չարաթ մը, ամիս մը ...:

Ու ... պասթա՛, որովհետեւ պանիր հացը եթէ փապքա ալ ըլլայ, ամէն օր չի մարտիր, աւա՛ղ:

— Մնակեան իրաւունք ունի եղեր, ա՛լ չեմ կրնար կոր պանիր-հաց ուտել ...:

Ահա՛ թէ ի՛նչպէս քակուեցաւ մօր կալմած կատակերգակ զաւեշտախումբը (Բ. տը պազրուիլին Զափրաստի խումբին):

Փակագիծի մէջ՝ չինք կրնար ըսել բոլորովին թէ ժողովուրդը չկրցաւ հասկնալ բարակ բիւսները, այլ Թօլայեան և իր ընկերները չկրցան հասկնել զայն, սա միակ պատճառով որ բարակ բիւսի ներկայացումը առնուազն էսան փորձի կը կարօտի, մինչ անոնք հազիւ երեքուկէս փորձով կը խաղային այդ խաղերը:

Հիմա Թօլայեան նորէն բացն է:

Ահա՛ իր կեանքը, ցաւադարութիւնները և խայտառակութիւնները համառօտիւ:

* * *

Թօլայեան, Մանգուլմէի վերջին էջին շաբթօրեայ Միմոսը, Հանրագիտակի Գրախալաչօն և Թատերաբեմի երկու երեսով ... աներեսը, որուն ո՛չ գրածները հինգ փարակի՛ն են, ո՛չ ալ խաղացուածքը, որ աշխարհիս մեծագոյն թթամիտն է՝ հակառակ էն սրբամիտ ըլլալ կարծելուն, հագած իր երկար շրջագգեատը՝ սրկարէթին մուխերուն ցնդիլը կը դիտէր ծուլօրէն, պալքոնին պատուհանին ապուշօրէն դիտելով մարդիկը և ետքը:

Ո՛չ կը խաղայ, ո՛չ կը գրէ:

Բարեկենդանի վերջանալուն կըսպասէ գորիչը ձեռք առնելու համար, որովհետեւ ըսաւ իրեն՝ Բարեկենդանը մեծագոյն տօնն է, որուն միջոցին չի կրնար աշխատիլ:

Մի՛ հարցնէք իրեն թէ ի՛նչ կը դիտէ շաբունակ պատուհանէն:

— Մոլիէր ալ այսպէս կ'ընէր, պիտի պատասխանէ ձեզի:

Աւանակը, թերեւս ինքզինքը Մոլիէրին տեղը կը գնէ կոր:

ԿԱՎՌՕՇ

ԿԵՍ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԿԾԻԿԸ

[ՏԷՄԱՍՔԷ ՅՕԴՈՒԱԾ]

Ձօն ամէն անոնց որոնք եօթը շաբաթ պահք պիտի բռնեն :

Ձեմ գիտէր որ գիւղին, չեմ գիտէր որ փողոցին անկիւնը՝ քարաշէն տան մը պատուհանները մուս մութ, կարծես սիրելւոյ մը, սուգը կուլար: Վարագոյրները գոց, ձայն մը չչարկ մը անգամ չէր լսուէր, մինչ ուրիշ տուններ՝ Բարեկենդանը կը տօնէին ուրախ զուարթ գահգահաներով: Եւ սակայն դուրսը, գլխարկաւոր մարդաստուէր մը վար վեր կը սլքտկար մութին մէջ, ատեն ատեն կաղի ռէվէնպէնին մօտ կենալով, մէյ մը տունն ի վեր՝ մէյ մ'ալ ժամացոյցին նայելով: Կէս գիշերուան երկու ժամ կար դեռ:

Նոյն տանը կոնակի կողմի սենեակներէն միոյն մէջ երկու հոգինոց մահճակալի մը մէջ այր և կին կոնակ կոնակի դարձուցած կը քնանային ... իբր թէ:

Մանկամարդ կինը՝ որ քեստանէի որդի էր պըծըլ պըծըլ կուգար անկողինն մէջ, գլուխը բարձէն վեր առնելով ուշադրութեամբ կը նայի ամուսնոյն վրայ, և երբ կը համոզուի թէ լաւ մը քունը տարած է, կամ ... ց մը վերմակին տակէն ելլելով՝ ինքզինքը սենեկին մէջտեղը կը նետէ բոյլի:

— Շան գաւակ, ամէն գիշեր լէշի պէս կը բռուէր կը պառկէր, աս իրենկուն խօսութլախ տառցաւ ... ամա ըրի չըրի կաւ քսեցի՛ ետ, ըսելով՝ նախապէս պատրաստած բէշը, պղուղը, սկառքինները կառնէ և դուռը բանալով՝ չիտակ վար: Վարի սենեակը վաղ ձգուած կաղը քիչ մը բանալէ վերջ կսկսի հապճեպով հաղուիլ, այնպէս որ տասը վայրկենէն ինքզինքը փողոցին դուռը կը նետէ:

— Սեղրակ ...

— Համմէ՛ ...

— Շատ պէքէյէցո՛ւցի, հոգիս ...

— Պէքէյէլս բան մը չէ խուշս, ուղածիդ պէս ծանսըզ ծանսըզ սըվըշը կըցա՛ր դընելու ...

— Հա՛, հա՛, հոգդ մընէր, մինակ քիսա դուռին բալկնքը ճէպդ դիր ...

— Տուր նայիմ, ամա չարուխ քալէ, խանութը չի գոցուած տօմինօդ առնենք ...

— Ծօ՛ չելլայ բիս հիւանդութիւնի բան մը ըլլայ, գիտես քի կը գանիմ ...

— Տէր ողորմեայ, խօթուխներուն տակը քիչ մը օտը քօլօն կը դնենք, դուն հոգդ մընէր ...

Ու երկուքը միասին թեւ թեւի տրագարագ փողոցները կրկնելով կը հասնին Բուսֆօտի մը խանութը, ուր մարդը քունին չի կրնալով յաղթել ֆօթէօյին վրայ կը մրաբէր...

— Հայտէ՛ հայտէ՛ Մառտիկ աղա, շուայըրտըղըմ տօմինօյը վէր տէ մատամ կիյսին...

— Հա՛, նէրտէ գալտըն ճանըմ... պէնտէ պէքէտիմ պէքէտիմ ույգոււմ կէօթիւրմիւշ ...

— Անանկ քաշքառիքածի տամաններէն չեմ Մառտիկ աղա, խօսք տամ նէ ուշ կանուխ կը գտնուիմ ... ասանկ իրինկուն ալ խօլայ չէ ամէն բանը սրային դնել դուրս ելլալը ...

— Ատ ալ կայ մատամ ... հրամանցէք ներսի օտան այնա կայ, ըսելով՝ մինչ Մարտիկ աղա տաման ներս կառաջնորդէ, կամաց մը քավալիէին դառնալով,

— Միւսիւ Սեղրակ ...

— Նէ՛ տիր, նէ՛ օլմուշ ...

— Ծօ պու պըլտըրընը նէրտէն պուտուն ... աշկ օլսուն, կիւղէլ բարչա ...

— Աման Մարտիկ աղա, սիվուրեալարտան տէյիլ, ըղզընտայըմ ...

— Պէնտէ աննատըմ տա օնուն իլին սէօյլէյօրըմ ...

Ու քիչ վերջը տաման հագուած սքուած Սեղրակին թեւը մտնալով դուրս կելլան խանութէն և չիտակ պարահանդէս կուղղուին:

Թողունք որ միւսիւ Սեղրակ իր տաման խածած պարահանդէս մտնայ, ու մինք դառնանք այն վանդակը՝ ուրկէ թռած էր տատըսը:

Երկու հոգինոց մահճակալին մէջ, Բարեկենդանի շաբթուով միս մինակ մնացած ամուսինը պահ մը կէս քուն կէս արդուն կը ձայնէ:

— Աճապ ելլամ բռնթուգալ մը ուտեմ նէ հազս կը կտրէ՞ Սօֆիկ ...

—

— Գարտաշ պու գառը տա պիր քէրէ ուշուտով մը, տավուլ չալսան ուշանմաղ ...

—

— Էյ չէնէ մէլլար ամա՛, տեղը ըսէ ես առնեմ, ո՛ւր ես դրեր քա՛ ... ըսելով կեւայ կը նստի անկողինին մէջ և ձեռքովը արթընցընել կուզէ կինը և որ ձեռքը վերմակին վրայ պարապը կերթայ ...

— Սօֆիկ ...

—

— Սօֆիկ ...

—

— Չօգ չէ՛յ, ո՛ւր ես քա՛ ... ու կեւայ մոմը կը վառէ:

Սենեակին մէջի պարապուրթիւնը տեսնալուն կրակ կտրած ...

— Ծօ՛ նէ խալթ եէր, ծօ՛ պիզիմ գառը ... Սօֆիկ ...

Եւ անմիջապէս բանթուփները հագնելով գիշերնոցով, մոմը կառնէ և շունչը չիտակ վարի սենեակը պառկող զոքանջին դրան կը մօտենայ,

— Եղսաբէ՛թ ... Եղսաբէ՛թ ...

— Ի՛նչ է ան Սուքիաս աղա՛, ի՛նչ կուզես ...

— Բաց դուռը քի ուզածս ըսեմ ...

— Մեղայ տէր Աստուած, կէս գիշերին ի՛նչ կուզես կոր ճանրմ, Սօֆիկը քովդ չէ՛ ...

— Բաց դուռը ճանրմ, հէ՛մ թէզ ըրէ ...

— Չըլպախ եմ Սուքիաս աղա, չեմ կրնար բանար ...

— Թէ՛քմէն պիտի ինչեցունեմ հիմա, բաց կըսեմ կոր ...

Տիկին Եղիսաբէթ կամաց մը գոց դրանը ետին գալով,

— Բա Սուքիաս աղա ներս գալ կուզես

կոր նէ ատանկ քիւթիւրտիւով չըլլար խըյանէթ ... հիմա՛ միտքդ ինկանք աստար տարիէ ...

— Հաւատքէ կեւլամ կոր բաց դուռը քի ըսեմ ...

— Սո՛ւս ... աղջկանս անկածը քիրիչն է, կայնէ վրայէս կէսէն մը քաշեմ տէ անանկ՝ ըսելուն չի մնար, Սուքիաս աղա ոտքի հարուածով մը դուռը կը կտրէ և զոքանջին հետ դէմ առ դէմ գալուն,

— Կընիկս կուզեմ կընիկս, հիմա՛ օռթան հանելու է ...

— Բա նասը՛լ կընիկ, հիմա՛ խելքիս կուգայ, Սօֆիկը վերը չէ՛ քի ...

— Ձիտեմ ալթըլս, կընիկս օռթան հանելու է, ո՛ւր գնաց, ո՛ր թառափ գնաց, դուն հէլպէթ գիտես, մարը չե՛ս մի ...

— Բա խաչ քի խապար չունիմ, ամէնքս մէկ պառկել ելանք, հիչ չիյտեմ կոր ...

— Կետինին տիպը ասնիք, կընիկ չէ՛ք մի ... հիմա կընիկս կուզեմ, օռթան հանելու է ...

Տիկին Եղիսաբէթ խըլտըր խալայ կը հագուի ու մոմ մըն ալ ինք առնելով՝ տանը մէջ վեր վար կսկսի բնտուել, անուր անեծքներ տեղալով աղջկանը գլխուն:

— Ի՛նչ եղաւ, գտա՛ր, կը ձայնէ Սուքիաս աղա, բարկութենէն ինքիդինքմէն ելած:

— Ձիգայ, դուրս է ելէր ... ո՛ւր է գացէր, ո՛ւր կրնայ երթար ...

— Կընի՛կ, կընիկս կուզեմ կընիկս ... հիմա գտնալու բերելու է, չէնէ տունը կըրակի պիտի տամ գիտցած եղիր ...

— Էյ չէնէ հագուինք տէ դուրս իյնանք, երկու լուսը քէօռնայ քի ասանկ ինծի մահման դողերու պերաւ ...

— Ծօ՛ չիմտի պու վազըթ նէրտէն պուլթալը Ալլահըմ ... ծօ՛ չագասը եօգ, գառըմը կէօթիւրմիւլէր ...

— Էյ ճանրմ թէլաչ մընէր, խելքս գլխիս ձգէ ... սա նայէ կէօքսիւս կոճակներն ալ չեմ դրեր, ամապ ինտո՛ր տիխաթ տիխաթ նայեցար ...

— Հայտէ քա սէնտէ, պու գատար սէնէ տիր քէնտինի թութտուն տա չիմտի ֆրսաթ մը պուլտըն ...

— Ը՛նհ ... պէրէքեաթ ինծի քի, ինքիզինքս սիրցուցի տէ աղջիկս առիւր ...

— Չառած ըլլայի, մէզառ թաշի մը դէմըս ելլար տէ սա նամուսսուզութիւնը չըլլար...

— Էյ անէքի պիտի երթանք, դուրս պիտի իյնանք նէ վրաս շտկեմ քի՛ մը ...

— Քա ո՛ւր պիտի երթանք, խօճա տեղը գիշերով ո՛ւր պիտի բնակուինք ...

— Դուռն հետս եկուր, ես աստեղին խուռտըն՝ եմ, ես հիմա ծառքովս դրածիս պէս կերթամ եախալամիչ կընեմ կը պերեմ, թէսլէմ կընեմ, ամա դուռն հետս պիտի ըլլաս...

— Հէյ Ալլահըմ, սիւտիւ բիս դառը ալմագ նէ պէլա շէյ իմիչ ըսելով՝ մինչ կոշիկները կը հագնէր, Տիկին եղիսաբէթ խօսք առնելով,

— Խնչո՛ւ սիւտը բիս պիտի ըլլայ ... չօգ շէյ, քանի տարի է հոս ես վրաս պան մը կը տեսնամս կոր քի խմած կաթին բիս կըսես կոր ...

— Հայտէ քա աղղըմը աշտըրմա, սօղոս կէօրիւշիւրիւզ ...

— Գըղըմ կէլարիքտէն սօղրա ֆըրսաթ պուլամայըզ, անէքի իս քունէս արթնցուցիր նէ՛, նստէ տէ խօշ պէշ ընենք, մէյմէկ խալվէ խմենք անկէ ետքը դուրս իյնանք Սուքիաս Աղա ...

— Թէզ տունէն դուրս իյնոնք, եանկըն վար պիտի պոռամ կընիկ, քուկին օղեբըզ ալ աս գիշեր հէմէն ախալանմիշ եղան ...

— Վո՛ւշ ... կրակ ու բոց ես կտրեր, տէ քալէ նայիմ կրթանք տա շան զաւակը գտնանք, ամա՛ ասանկ երեսնիս բաց պիտի երթանք, ան սաղլամ փարայ պալօն է ... Սուքիաս աղա դուռն գիտես ամա՛, եկուր քիսվէթ մտնանք ...

